

## ՀՀ բանկային համակարգի 2013 թ-ի առաջին եռամսյակի գործունեության ամփոփում

2013 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Հաշվետու եռամսյակի ընթացքում համակարգի մաքուր շահույթը կազմել է մոտ 8.49 մլրդ դրամ, վնասը՝ 1.4 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 9.89 մլրդ դրամ:


### Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2013 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում աճել են 6.2 %-ով կամ 150.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,562.8 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 116.8 մլրդ դրամով կամ 5.1 %-ով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ակտիվները նվազել էին 0.9 %-ով կամ 18.9 մլրդ դրամով: Միաժամանակ ավելացնենք, որ մեկ տարվա կտրվածքով (2012-ի մարտի 31-ից մինչև 2013-ի մարտի 31-ը) ընդհանուր ակտիվներն ավելացել են 24.7 %-ով կամ 507.6 մլրդ դրամով:

### Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 6.1 %-ով կամ 98.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 2.5 %-ով կամ 4.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,718.9 և 164.5 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 3.5 %-ով կամ 55.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.1 %-ով կամ 14.1 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 5.9 %-ով կամ 79.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 10.3 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ նշենք, որ 2012-ի մարտի 31-ի համեմատ (մեկ տարվա կտրվածքով) վարկային ներդրումներն ավելացել են 21.4 %-ով կամ 302.7 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 11.0 %-ով կամ 16.3 մլրդ դրամով: 2013-ի մարտի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 67.1 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 65.0 %-ը կամ 1,117.4 մլրդ դրամ, և վերոնշյալ ցուցանիշն առաջին եռամսյակի ընթացքում աճել է 6.6 %-ով կամ 69.2 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 6.8 %-ի կամ 60.0 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն հավելենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին մոտ 2.8 %-ով կամ 29.0 մլրդ դրամով:


2013 -ի մարտի 31-ի դրությամբ  
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2013 -ի առաջին եռամսյակի ընթացքում աճել են 7.2 %-ով կամ 35.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 525.2 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 5.9 % կամ 27.5 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալն աճել էր 7.7 %-ով կամ 29.8 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 30.6 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 19.8 %-ը կամ 341.2 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 7.7 %-ը կամ 132.4 մլրդ դրամ: Այս

տարվա առաջին եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 6.0 %-ով կամ 19.2 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 8.0 %-ով կամ մոտ 9.7 մլրդ դրամով, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում սպառողական վարկերի ծավալն աճել էր 8.8 %-ով կամ 25.9 մլրդ դրամով, իսկ հիփոթեքային վարկերի ծավալը նվազել 1.3 % կամ 1.6 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ 2012 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել էր 7.5 % կամ 18.9 մլրդ դրամ, հիփոթեքային վարկերինը՝ 1.4 % կամ 1.5 մլրդ դրամ:

### Համակարգում վարկային ներդրումների փոփոխման դինամիկան




### Պարտավորություններ

2013-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 2,145.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 28.1 %-ով կամ 470.8 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 7.1 %-ով կամ 142.5 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում՝ 5.3 %-ով կամ 100.6 մլրդ դրամով:


Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 9.1 %-ով կամ 66.9 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 15.1 %-ով կամ 74.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 802.3 և 565.3 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 10.8 % կամ 64.0 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 2.0 % կամ 2.9 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել 8.2 % կամ մոտ 20.6 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 22.3 % կամ 53.4 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում աճ էր գրանցվել միայն ֆիզիկական անձանց ավանդների գծով. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 7.2 %-ով կամ 49.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 7.7 %-ով կամ 42.5 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 5.1 %-ով կամ 7.0 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 5.2 %-ով կամ 27.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 3.9 %-ով կամ 10.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 6.6 %-ով կամ 17.0 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 6.8 %-ով կամ 38.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 6.2 %-ով կամ 26.9 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 9.0 %-ով կամ 11.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 6.7 %-ով կամ 33.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել էին 9.4 %-ով կամ 19.7 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 18.5 %-ով կամ 52.9 մլրդ դրամով:

Հարկ է նաև փաստել, որ նախորդ տարվա մարտի 31-ի համեմատ (մեկ տարվա կտրվածքով) ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 34.5 %-ով կամ 205.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 42.3 %-ով կամ 195.2 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 7.7 %-ով կամ 10.4 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդներն աճել 22.4 %-ով կամ 103.3 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 19.2 %-ով կամ 43.9 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 25.5 %-ով կամ 59.4 մլրդ դրամով: Ասվածին միայն հավելենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 63.8 %-ը:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը  
2013 թ.-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)



Համակարգում ժամկետային ավանդների  
փոփոխման դինամիկան




### Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան



### Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 2.0 %-ով կամ 8.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 417.6 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում այն ավելացել էր 4.1 %-ով կամ 16.3 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա առաջին եռամսյակում ավելացել էր 1.5 %-ով կամ 5.7 մլրդ դրամով, իսկ նախորդ տարվա մարտի 31-ի համեմատ (մեկ տարվա կտրվածքով)՝ 9.7 %-ով կամ 36.9 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից կանոնադիր կապիտալը հաշվետու եռամսյակում փոփոխություն չի կրել, իսկ չբաշխված շահույթը (եկամուտների պահուստը) հաշվետու եռամսյակում նվազել է 15.9 %-ով կամ 27.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 244.1 և 143.1 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 58.5 և 34.3%-ը, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում կանոնադիր կապիտալը նույնպես փոփոխություն չէր կրել, իսկ եկամուտների պահուստն աճել էր 17.5 %-ով կամ 25.4 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա մարտի 31-ի համեմատ կանոնադիր կապիտալն աճել է 4.4 %-ով կամ 10.2 մլրդ դրամով:

### Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան



**Եկամուտներ եվ ծախսեր**

Հաշվետու տարվա առաջին եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 84.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 73.0 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա առաջին եռամսյակում ընդհանուր եկամուտները կազմել էին 75.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 64.8 մլրդ դրամ: Տեղի է ունեցել, որ հաշվետու եռամսյակի ընդհանուր եկամուտները և ծախսերը նախորդ եռամսյակի ընդհանուր եկամուտներին և ծախսերին զիջել են համապատասխանաբար 8.6 %-ով կամ 7.9 մլրդ դրամով և 1.9 %-ով կամ 1.4 մլրդ դրամով:


**Շահույթ**

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 8.49 մլրդ դրամ մաքուր շահույթ (շահութահարկը հանած), որը 2012 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթին զիջել է 0.04 մլրդ դրամով:

**Ամփոփ ցուցանիշներ**

2013-ի առաջին եռամսյակի արդյունքներով բանկային համակարգի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 2.16 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.34 %: Պետք է արձանագրել, որ անցած տարվա նույն ժամկետի համեմատ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության նվազում 0.2 տոկոսային կետով և ակտիվների շահութաբերության աճ 0.05 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2013 -ի մարտի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,  
դրանց աճը/նվազումն առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.  
(մլն դրամ)

Գ/Գ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Զբաշ. շահույթ I-եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ Բանկ	253036,0	1,6	2	178095,9	4,3	202336,1	1,6	3	55113,8	10,0	50699,9	1,9	1	30000,0	0,0	11422,6	765,0
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	222367,4	5,1	5	143720,6	8,2	184438,6	4,8	5	52501,8	10,2	37928,8	6,8	3	18434,4	0,0	17862,6	1958,4
3	Արդշինհիմնվեստբանկ	222738,7	8,9	4	149356,3	10,2	185170,8	10,2	4	59283,4	7,7	37567,9	3,1	4	15513,6	0,0	17808,2	1042,1
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	239042,3	12,3	3	187483,1	9,6	206889,9	14,0	2	70536,0	19,1	32152,4	2,5	5	13906,2	0,0	14084,3	768,6
5	Կոնվերս Բանկ	117222,3	-0,1	9	74194,9	11,1	99887,1	0,0	9	30992,2	12,3	17335,2	-0,5	11	4923,3	0,0	8569,4	508,4
6	Յունիբանկ	144589,6	4,0	7	107695,8	10,9	125462,3	4,6	7	71688,3	9,0	19127,2	0,6	8	11400,7	0,0	7744,0	403,4
7	Հայէկոնոմբանկ	64329,5	-2,3	13	39578,0	6,4	54860,3	-2,6	13	14410,7	4,5	9469,2	-0,1	17	2333,3	0,0	1550,5	-15,0
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	308931,3	26,1	1	168304,8	10,0	270677,3	30,0	1	53142,0	13,4	38254,1	3,7	2	25475,9	0,0	12668,0	1413,1
9	Ինելյոբանկ	115606,9	5,1	10	82226,1	0,2	96701,0	5,6	11	20065,2	137,2	18905,9	2,4	9	7894,4	0,0	7925,6	897,9
10	Հայքիզնեսբանկ	201414,9	7,5	6	128809,0	2,5	180347,3	8,7	6	64573,4	-4,5	21067,6	-1,5	6	17500,0	0,0	3021,7	-354,0
11	Անեյիբ Բանկ	62513,6	-2,3	14	37772,9	7,6	48784,8	-1,4	14	23845,8	7,4	13728,7	-5,4	13	14300,0	0,0	-835,1	-778,4
12	Առեկսիմբանկ	123356,2	-0,1	8	94541,0	2,4	106377,6	-0,1	8	28100,6	14,7	16978,6	0,1	12	12347,3	0,0	4324,6	145,9
13	Արցախբանկ	89234,0	1,4	12	62394,7	0,0	76298,4	1,4	12	15859,6	13,5	12935,7	1,8	15	6561,1	0,0	4281,0	232,0
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	115482,2	1,6	11	79930,9	-1,9	98055,8	0,8	10	19871,2	16,0	17426,4	5,9	10	8335,4	0,0	8295,5	728,7
15	ԱրմսվիսԲանկ	53421,2	-2,3	17	28273,4	1,5	40240,0	-4,6	17	4852,8	6,9	13181,1	5,5	14	7002,0	0,0	4044,2	490,2
16	Զարգ. Հայկական Բանկ	53684,5	5,0	16	37601,3	5,6	44908,8	5,6	15	30073,4	8,6	8775,7	1,9	19	4556,7	0,0	3834,2	167,3
17	Պրոմբեյ Բանկ	54213,4	-2,1	15	32655,7	9,6	33644,2	-4,2	19	11872,6	14,9	20569,2	1,4	7	14400,0	0,0	6062,6	297,3
18	Բիբլոս Բանկ Հայաստան	50252,1	2,7	18	37895,0	4,9	41290,1	3,7	16	17289,2	3,6	8962,1	-2,0	18	8382,2	0,0	572,9	-132,0
19	ԲՏԱ Բանկ	11488,8	-13,4	21	6503,2	-4,6	5813,7	-23,2	20	2219,3	29,4	5675,0	-0,5	21	6520,0	0,0	-886,4	-61,9
20	Պրոկոնեդիտ Բանկ	43817,3	4,8	19	36009,7	5,2	37730,9	5,8	18	10152,6	-12,5	6086,4	-0,9	20	7490,0	0,0	-1403,6	-57,3
21	Մելլաթ Բանկ	16039,1	3,6	20	5866,4	-10,9	5222,4	10,3	21	81,6	3,7	10816,7	0,6	16	6850,0	0,0	3705,0	70,9
	Ընդամենը	2562781,3	6,2		1718908,7	6,1	2145137,4	7,1		656525,5	10,8	417643,8	2,0		244126,5	0,0	134651,8	8490,6